

Արսեն Է. Հարությունյան

Պատմ. գիտ. թեկնածու

**ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐՆ ՈՒ ԵՐԿՆԱՅԻՆ
ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ**

Մաս առաջին: Երկրաշարժ*

Բանալի բառեր – երկրաբանական երևույթներ, երկրաշարժ, Արեգակի խավարում, վիմագիր, «Դիվան հայ վիմագրության», Սեդրակ Բարխուդարյան, տապանագիր, խաչքար:

Մուտք

Միջնադարյան Հայաստանի պատմության գրավոր սկզբնաղբյուրները՝ վիմական արձանագրությունների և ձեռագիր հիշատակարանների հաղորդած տեղեկությունները վաղուց հայ և օտարագրի հետազոտողների ուշադրության կենտրոնում են: Դրանց արժևորման վկան դեռևս խորհրդային տարիներից հրատարակվող «Նյութեր հայ ժողովրդի պատմության» և «Դիվան հայ վիմագրության» մատենաշարերն են, որոնց սովորաբար հատորներում ժամանակագրորեն, իսկ վիմագրերի դեպքում՝ ըստ շրջանների/մարզերի, ամբողջացվում են հայ գրավոր մշակույթի նշխարները:

Եթե ձեռագիր մատյանների՝ գրչության և հետագայում հավելված հիշատակարանները հավաստի տեղեկություններ են հաղորդում հիմնականում ձեռագրաստեղծման մանրամասների՝ գրչի, պատվիրատու-ստացողի, ծաղկողի, կազմարարի, գրչության վայրի ու ժամանակի, հաճախ՝ նաև երկրում տիրող բարքերի ու քաղաքական անցքերի մասին¹, ապա վիմագրերն առավել սեղմ շարադրանքով փաստում են ժամանակի այս կամ այն իրադարձությունը՝ եկեղեցաշինություն, ջրօգտագործում, նվիրատվություն, ապահարկում, կանոնաիրավական նորմերի հաստատում, կոթողի կանգնեցում, աղետալի երևույթների մասին հիշատակություն և այլն, որոնց ամթիվ կամ ի նշանավորումն կատարվածի՝ վիմագիր է կազմվել:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 12.12.2021:

¹ Հիշատակարանների մասին տե՛ս **Հարությունյան Խ.**, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, Եր., 2019:

Նշելի է, որ, չնայած վիմագրերի բովանդակային առանձնահատկություններին նվիրված մեծ ու փոքր աշխատությունների առկայությանը², երկնային ու երկրաբանական երևույթների մասին վկայող վիմագրերը երբևէ հատուկ և համապարփակ քննության չեն արժանացել³: Նկատառելով այդ՝ սույն հետազոտությամբ փորձելու ենք լուսաբանել հայերեն վիմագրերում այդօրինակ երևույթների վերաբերյալ հիշատակությունները՝ սկսելով երկրաշարժերից⁴:

Հայկական լեռնաշխարհը գտնվում է լեռնակազմական հանգուցային գոտում, ինչով պայմանավորված՝ այս տարածաշրջանում տեկտոնիկ բնույթի երկրաշարժերի հաճախականությունը բավական մեծ է: Հիմնականում զգալի ավերածություններով ու զոհերով ուղեկցվող հայաստանյան երկրաշարժերը բազմիցս հիշատակվել են հայ մատենագրության մեջ, հազվադեպ՝ նաև վիմագրերում: Դրանց մասին անուղղակի հիշատակություններ կան անգամ Վանի թագավորության սեպագրերում⁵:

Հայկական լեռնաշխարհում տեղի ունեցած երկրաշարժերն ու դրանց առաջացման պատճառները, հիմնականում առանց վիմագրական աղբյուրների վկայությունների, քանիցս ուսումնասիրվել են հետազոտողների կողմից: Ներկայացվել են դրանց ժամանակագրությունը, տարածումը, հանգուցային կենտրոնները և պատճառահետևանքային դրսևորումները⁶: Մեր խնդրից դուրս են այդ հարցերին վերստին անդրադառնալն ու վերլուծություններ անելը, ուստի վերադառնանք երևույթի մասին վկայող վիմագրերին:

1. Երկրաշարժերի վիմագիր հիշատակությունները

Մեզ հայտնի ժամանակագրորեն վաղագույն վիմագիր հիշատակությունը պահպանվել է **Քարկոփի** կամ **Խոտակերաց վանքի Ս. Աստվա-**

2 Տե՛ս, օրինակ, **Մանուչարյան Ա.**, Քննություն Հայաստանի IV-XI դարերի շինարարական վկայագրերի, Եր., 1977, **Գրիգորյան Գր.**, Հայկական վիմագրություն, Եր., 2000, էջ 67-78, **Սարգսյան Գ.**, Միջնադարյան կանոնադրական նորմերի վիմագրական արտացոլումները, «Պատմաբանասիրական հանդես», 2006, N 2, էջ 109-133, **Սարգսյան Լ.**, Հայաստանի նվիրատվական արձանագրությունները (9-14-րդ դդ.), Եր., 2014 Ն: 3 Վերջերս մնան մի փորձ է արել երիտասարդ հնագետ Ավետիս Գրիգորյանը – տե՛ս **Գրիգորյան Ա.**, Երկրաշարժերն ըստ վիմագրական աղբյուրների, «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածու, N 12, Եր., 2017, էջ 259-265: 4 Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 20TTSH-005 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում: 5 Տե՛ս **Арутюнян Н.**, Корпус урартских клинообразных надписей, Եր., 2001, էջ 181, արձ. 173V/116-20, էջ 244-245, արձ. 241F25-28: Հմմտ. **Grekyan Y.**, Evidence of celestial phenomena in Urartian cuneiform texts?, “Aramazd” Armenian Journal of Near Eastern Studies, Vol. XIII, Issue 1, Oxford, 2019, էջ 81, 84: 6 Տե՛ս **Կոստանանց Կ.**, Շարժի տարբերությունն հայոց մէջ, Թիֆլիս, 1902, **Ստեփանյան Վ.**, Երկրաշարժերը Հայկական լեռնաշխարհում և նրա մերձակայքում, Եր., 1964, **Բարսեղյան Լ.**, Պատմագրական վկայությունները Հայկական լեռնաշխարհի երկրաշարժերի մասին (հնագույն ժամանակներից մինչև XIX դարի սկիզբը), Եր., 1995, **Кондорская Н., Шебалин Н.**, Новый каталог сильных землетрясений на территории СССР с древнейших времен до 1975, М., 1977, **Хачичян Э.**, Прикладная сейсмология, Եր., 2008 Ն:

ծածին եկեղեցու հարավային պատի վերնամասում: 910 թվակիր ընդարձակ արձանագրության քարերից մի քանիսն ընկել են, ինչի հետևանքով որոշ հատվածներ կորսվել են: Այդ է պատճառը, որ վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը երկրաշարժի մասին վկայող հատվածը վերականգնել է՝ հիմք ընդունելով պատմագիր Ստեփանոս Օրբելյանի ընդօրինակությունը: Վիմագրի համաձայն՝ խոտաձարակ կրոնավորների համար Սյունյաց գահերեց իշխան Աշոտի կառուցած եկեղեցիները քանդվել են. «...զի **հիմնաշարժ լինելով** աներեցան սուրբ եկեղեցիքս տեառն իմոյ Աշոտի...»⁷, որից հետո վերջինիս այրի Շուշան տիկինը Սյունյաց Հովհաննես եպիսկոպոսի միջնորդությամբ վերահաստատել է վանքին ի սեփականություն տրված Արաստամող (Արաստամուխ) գյուղն ու խոնարհված եկեղեցիների տեղում կառուցել հինգ նոր եկեղեցի. մեկը՝ անուսնու և իր հիշատակի, չորսը՝ գավակների արևշատության և հոգիների փրկության համար. «...հինգ եկեղեցիսդ այդ, գոր ես շինեցի, մին եկեղեցիդ, որ է Աստուածածինդ, տեառն իմոյ Աշոտի եւ յիւ անուն լիցի... եւ ի չորեք եկեղեցիքդ եղիցին որդեկաց իմոց յարեւշատութիւն եւ հոգեացն փրկութիւն...»⁸:

Այսու, վիմագրի բացակայող հատվածները վավերացվում են Ստեփանոս Օրբելյանի հաղորդմամբ, համաձայն որի՝ վայոցձորյան ավերիչ երկրաշարժը, ըստ ամենայնի, տեղի է ունեցել 906 թ. կամ փոքր-ինչ ավելի վաղ, քանի որ Տաթևի վանքապատկան կալվածքների սահմանները հաստատող 906 թ. վճռագրից հետո պատմագիրը նկարագրում է վերոնշյալ դեպքերն ու հավելում. «Յառաջ քան գայս... **ի սաստիկ շարժմանէ** տապալին եկեղեցիքն և ամենայն շինուածք վանիցն (Խոտակերաց – Ա. Հ.)»⁹:

Սաստիկ երկրաշարժից ավերված եկեղեցու նորոգման մասին է վկայում **Հաղբատավանքի Ս. Նշան եկեղեցու** հյուսիսային շքամուտքի կամարակալի 1016 թ. քառատող վիմագիրը, ըստ որի՝ Հոնովարի որդի Մուկը նորոգել է վանական համալիրի կաթողիկե Ս. Նշան եկեղեցին, «որ աներեաւ **ի սաստիկ շարժմանէ**»¹⁰: Բացի այդ՝ նա վանքին է նվիրաբերել իր գանձագին ագարակն ու միաբանության կողմից պատարագի արժանացել Վարդավառի տոնին: Նշելի է, որ Հաղբատի վիմագրերում Մուկը երկիցս է հիշատակված. երկրորդ անգամ նրա անունը կարդում ենք որդու՝ կրտսեր Հոնովարի հիշատակին վանքի գրատան միջանցքում կանգնեցված խաչքարի 1023 թ. վիմագրում, որում Մուկը վկայված է «իշխանաց իշխան» տիտղոսով¹¹:

7 «Դիվան հայ վիմագրության» (այսուհետ՝ ԴՀՎ), պրակ III. Վայոց ձոր. Եղեգնածորի և Ազիզբեկովի շրջաններ, կազմեց **Բարխուդարյան Ս.**, Եր., 1967, էջ 206-207, արձ. 666:

8 Նույն տեղում:

9 **Ստեփանոս Օրբելյան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 234, 236:

10 ԴՀՎ, պրակ IX, Լոռու մարզ, կազմեցին **Բարխուդարյան Ս., Ղաֆադարյան Կ., Սաղումյան Ս.**, Եր., 2012, էջ 131, արձ. 236:

11 Տե՛ս նույն տեղում, էջ 203, արձ. 382:

Ինչ վերաբերում է հիշատակված «սաստիկ» երկրաշարժին, ապա վիմագրի նախորդ հրատարակիչներն այդ մասին հավելյալ որևէ աղբյուր չեն վկայակոչում: Մատթեոս Ուռհայեցու հաղորդմամբ՝ 1015 թ. մեծ երկրաշարժ է եղել Եկեղյաց գավառում, որի հետևանքով խոնարհվել են բազմաթիվ եկեղեցիներ, մեծապես ավերվել է Երզնկա քաղաքը: Աղետը տեղի է ունեցել ամռանը, երբ «խաւար և մութն լինէր ի վերայ երկրի, մինչև արեգակն և լուսին ի կերպս արեան երևէին»¹²: Բացի այդ՝ վիմագրին ժամանակակից է Մաշտոցյան Մատենադարանի (այսուհետ՝ ՄՄ) 1737 ձեռագրում՝ «Թագաւորք վերջինք Բագրատունիք» (էջ 68ա-9բ) խորագրով միավորին կից՝ անանուն հեղինակի կազմած ժամանակագրության հիշատակություններից մեկը, ըստ որի՝ «ի ՆԿԵ.-ն (1016) շարժ եկն սաստիկ»¹³: Ինչպես ծանոթագրում է բնագրի հրատարակիչ Վազգեն Հակոբյանը, երկրաշարժը վկայված է նաև ՄՄ 8481 ձեռագրում և Մխիթար Այրիվանեցու երկում, միայն թե տարբեր թվականներով՝ համապատասխանաբար 1018 և 1011 թթ.¹⁴:

Մեր համոզմամբ՝ Բագրատունյաց վերջին թագավորներին նվիրված բնագրին կից ներկայացված ժամանակագրության մեջ հիշատակված է հենց Հաղբատի 1016 թ. երկրաշարժը, քանզի բնագրում գրիչը մանրամասն տեղեկություններ է հաղորդում թագավոր-թագուհիների եկեղեցաշինության, ի մասնավորի՝ Խոսրովանույշ թագուհու նախածեռնությամբ Սանահինի ու Հաղբատի վանքերի հիմնադրման մասին. «Յաւուրս սորա (Աշոտ Գ Ողորմածի – Ա. Հ.), և ի ՆԺԵ. (966) թվականին, ի Սևորդիսն շինեցան Հաղբատ և Սանահինն: Ժ. (10) ամաւ յառաջ զՀաղբատ շինեաց կինն Աշոտոյ Խոսրովանույշ և ապա զՍանահինն (իրականում նախ Սանահինն է, ապա՝ Հաղբատը – Ա. Հ.), վասն արևշատութան որդոց իւրեանց՝ Գուրգենայ, Սմբատայ և Գագկայ»¹⁵: Ենթադրելի է, որ ժամանակագրության հեղինակին ծանոթ պիտի լինեին ոչ վաղ անցյալում տեղի ունեցած դեպքերը, ուստի արձանագրել է երկրաշարժը՝ առանց տեղանքը մասնավորեցնելու¹⁶:

12 **Մատթեոս Ուռհայեցի**, ժամանակագրություն, Բ. տպագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 98:

13 Չեռագրի ընդարձակ նկարագրությունը տե՛ս «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հատ. Ե., կազմեց **Եգանեան Օ.**, Եր., 2009, սյուն 1032: Բնագիրը տե՛ս Անանուն ժամանակագրություն, «Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ.», հատ. II, կազմեց **Հակոբյան Վ.**, Եր., 1956, էջ 502:

14 Տե՛ս նույն տեղում, էջ 503, ծնթ. 6:

15 Նույն տեղում, էջ 501:

16 Հաղբատի կաթողիկեն խոնարհվել է նաև Գանձակի 1139 թ. երկրաշարժից: Սամուել Անեցու ձեռագրերից մեկում կարդում ենք. «...շարժն սաստիկ, որ կործանեաց զԳանձակ շահաստան, յորում եւ փլաւ սուրբ կաթողիկէն Հաղբատ, այլ եւ մեռանին մին հարուածոյ Բ. (2) սինքն հաւատոյ Գրիգոր եւ Սարգիս վարդապետը, որոյ թոքակերի եւ Կորխեցին կոչեցեալ» (**Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, ժամանակագրություն. Աղամից մինչեւ 1776 թ., աշխատասիրությամբ **Կ. Մաթևոսյանի**, Եր., 2014, էջ 213): Իսկ Կիրակոս Գանձակեցու հաղորդմամբ՝ «...ընդ աւուրսն ընդ այնորիկ (1139 թ. – Ա. Հ.) եղև յանկարծակի մէգ և մառախուղ, և լցաւ առհասարակ լեառն և դաշտ, և եղև շարժ ահագին, և կործանեցաւ մայրաքաղաքն Գանձակ... բայց մեռաւ ի շարժմանէն մեծ վարդապետն Գրիգոր հանդերձ այլ բազմութեամբ արանց և կանանց և մանկտոց, որոց ոչ գոյ թիւ, զոր սպանին շինուածքն անկեալ ի վերայ» (**Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ **Կ. Մելիք-Օհանջանյանի**, Եր., 1961, էջ 200):

Ոչ միայն երկրաշարժի, այլև Արեգակի խավարման մասին է վկայում երկիրը սելջուկներից ազատագրելու առթիվ 1195/6 թ. կանգնեցված **Կոշի որմնափակ խաչքարի** պատվանդանի արևմտյան նիստի ընդարձակ արձանագրությունը, ըստ որի՝ կոթողը կանգնեցվել է համաձայն Պետրոս վարդապետի (Ականատեսի) տեսիլքի, որը «հոգոյ ակամբք» և երկնային նշանի, այսինքն՝ խաչի մասնակցությամբ տեսել էր 20 տարի առաջ՝ 1175 թ.: Տեսիլքի նկարագրությանը զուգահեռ՝ Պետրոս վարդապետը հատկանշում է. «...եւ մին այդ տարին (ըստ Պարույր Մուրադյանի՝ հաջորդ տարին (=1176 թ.) – Ա. Հ.) **խաւարեցաւ Արեգակն.... եւ դղրդեցաւ Երկիր....**»¹⁷: Վիճակի նախորդ հրատարակիչներից Պ. Մուրադյանն ու Հ. Պետրոսյանն են նկատել, որ տեսիլքի իրական հիմքը 1176 թ. ապրիլի 11-ին Արևի լրիվ խավարումն է եղել¹⁸, ինչը նաև զանազան կանխատեսումների առիթ է դարձել, իսկ երկրաշարժի մասին աղբյուրներում որևէ այլ հիշատակություն չհանդիպեց¹⁹:

1176–1177 թթ. ավատատիրական ապստամբության (հայտնի՝ նաև Օրբելիների կամ Դեմնա արքայազնի ապստամբություն անվամբ) նախադրյալները ներկայացնելիս Արեգակի խավարման մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում մատենագիր և դեպքերին ժամանակակից Դավիթ Քոբայրեցին: Նրա հաղորդմամբ՝ «Նախ քան զայս միով ամալ խաւարեցաւ արեգակն յապրիդիոս ամսուոջ ի նորում կիւրակէին, յառաջնումն ժամու և նշանք յետ այսր ցուցան շփոթման»²⁰: Երևույթը մանրամասն նկարագրել է նաև Ներսես Լամբրոնացին. «...յառաւօտուն պահու ընդ ծագել արեւուն եղև խաւար ի վերայ երկրի, զոր ոչ ոք ի մարդկանէ էր տեսեալ այնպիսի, ոչ որպէս զխաւարումն արեգական, այլ որպէս զհասարակ գիշերի՝ յորժամ իցէ առանց լուսնի և աստեղաց, ի յաշխարհէն Պաղեստինացոց մինչև ի Բիւզանդիոն եւ յայլ բազում գաւառս»²¹: Ժամանակի առումով Դավիթ Քոբայրեցին մի քանի տարեթիվ է նշում՝ հայկազյան 627 թ. (=1178 թ.), Հովհաննես Սարկավագի 94 թ. (=1178 թ.), մեր թվարկության 1179 թ., հռոմեական 398 թ. (=1177 թ.)²²: Խնդրին անդրադարձած պատմաբան Հայրապետ Մարգարյանն առաջարկում է 1179-ից հանել 2

17 Վիճակի բովանդակությունն առաջինը մեկնաբանել է Սեդրակ Բարխուդարյանը՝ նշելով, որ 1175 թ. Արևի խավարման և երկրաշարժի մասին վկայող որևէ այլ աղբյուր հայտնի չէ (տես **Բարխուդարյան Ս.**, Հուշարձանախաչքար, «Ավանգարդ», Եր., 1958, 27 սեպտեմբերի): Վերծանությունը տես **Շահինյան Ա.**, Կոշի կոթողը և նրա արձանագրությունը, «Պատմաբանասիրական հանդես», 1968, N 2, էջ 198, **Մուրադյան Պ.**, Հայաստանի վրացերեն արձանագրությունները. աղբյուրագիտական քննություն, Եր., 1977, էջ 106, **Պետրոսյան Հ.**, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Եր., 2008, էջ 366:

18 Տես **Մուրադյան Պ.**, նշվ. աշխ., էջ 106, **Պետրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 366:

19 Աղբյուրագետ Արմեն Ասատրյանի համոզմամբ՝ երկրաշարժը նույն 1176 թ. է եղել, որից վնասվել են Կոշի Ս. Ստեփանոս եկեղեցին ու հարակից բնակավայրերի շենք-շինությունները (տես **Ասատրյան Ա.**, Ինչ է հայտնի Կոշի 1176 թ. երկրաշարժից, «Առավոտ» օրաթերթ, Եր., 2021, 12 հունվարի):

20 **Հակոբյան Վ.**, Դավիթ Քոբայրեցու հիշատակարանը, «Տեղեկագիր» հաս. գիտ., 1952, N 8, էջ 119:

21 «Ընդհանրական թուղթք Սրբոյն Ներսիսի Ընորհալոյ», գիրք երկրորդ. Պատճառ խնդրոյ միաբանութեան թագաւորին Հռոմոնց Մանուէլի եւ Ներսիսի եւ Գրիգորիսի թուղթքն, զոր գրեցին առ միմեանս, Երուսաղէմ, 1871, էջ 168:

22 Տես **Հակոբյան Վ.**, նշվ. աշխ., էջ 119:

տարի, որը համընկնում է նաև հռոմեական թվականի՝ 1177-ի հետ, քանզի «...միաբնակ Քոբայրեցին հաշվումների համար հինք է ընդունել հայկական քրիստոնեական թվականը»²³, իսկ «նախ քան զայս միով ամառ» արտահայտությունն ինքնին հուշում է, որ Արեգակի խավարման ստույգ տարեթիվ պիտի սահմանել 1176-ը (1177-1 սկզբունքով), ինչը հաստատվում է նաև Օպպոլցերի կազմած Արեգակի խավարման աղյուսակներով²⁴:

Համանման է նաև բյուզանդագետ Ազատ Բոզոյանի տեսակետը: Նա, հղում անելով Ներսես Լամբրոնացուն, Արեգակի խավարման տարեթիվ է համարում 1176-ը²⁵, քանզի այն տեղի ունեցավ Միրիոկեֆալոնի ճակատամարտի տարում. «...չորիւք ամսօք յառաջ, յետ սրբոյ Պասեփին, յաւուր նոր Կիրակէին»²⁶:

Պետք է փաստել, որ Կոշի խաչարձանի վիմագիրը համալրում է սակավաթիվ այն վիմագրերի շարքը, որոնցում վկայված են նաև երկնային երևույթներն ու աղետները: Այս դեպքում Արեգակի խավարմանը հաջորդել է նաև երկրաշարժը: Այն, որ երկրաշարժերին հաճախ նախորդել են երկնային երևույթները, ի մասնավորի՝ Արեգակի խավարումը, վկայում են նաև մատենագրական աղբյուրները: Այսպես՝ Անանուն Սեբաստացու տարեգրության մեջ արձանագրված է Երզնկայի 1045 թ. երկրաշարժը, որը, ըստ մատենագրի, օրեր շարունակ ցնցել է երկիրը, իսկ «...զամառային ժամանակն խաւար և մութն լինէր արեգակն և լուսին ի գոյն արեան երևէին»²⁷: Կամ՝ Անանուն Վանեցու տարեգրության մեջ կարդում ենք, որ 1692 թ. ապրիլի 13-ին Վանում «...արեգակն նուաղեցաւ և մէզ պատեաց զերկիր այնքան, զի մարդիկք մերձ գոլով զմիմեանս ոչ տեսանէին ի ցերեկի, և մինչև յերեկոյ կարմիր փոշի տեղեաց ի յերկիր, և եղև մահ անդրանկաց և սաստիկ շարժ»²⁸: Իսկ Անանուն Լիվոնացու ժամանակագրության հաղորդմամբ՝ 547 թ. Իտալիայի Տոսկանա գավառում «...տեղեաց արիւն ի յերկնից ի միջօրէի: Եւ արեգակն խաւարեցաւ և երկիր երէրէր»²⁹:

Սպասվող երկրաշարժի մասին է վկայում Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք **Անիի** վիմագրերից մեկը՝ պահպանված **Առաքելոց եկեղեցու գավթի** արևելյան պատին՝ արտաքուստ՝ հյուսիսային խորշի զույգ նիստերին: Ըստ բնագրի՝ տեր Սարգսի առաջնորդության և Փախրադինի մելիքության շրջանում Մխիթար եպս. Տեղերեցին «...**ի ցասմանէ**

23 Մարգարյան Հ., Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ժԲ. դարի պատմության մի քանի հարցեր, Եր., 1980, էջ 181:
 24 Տե՛ս Բաղայան Հ., Օրացույցի պատմություն, Եր., 1970, էջ 494:
 25 Տե՛ս Բոզոյան Ա., Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165-1178 թթ.), Եր., 1995, էջ 139:
 26 «Ընդհանրական թուղթք Սիրոյն Ներսիսի Ընորհալոյ», էջ 168:
 27 Անանուն Սեբաստացու տարեգրությունը, «Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ.», հատ. II, էջ 131:
 28 Անանուն Վանեցու տարեգրությունը, «Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ.», հատ. I, կազմեց՝ Հակոբյան Վ., Եր., 1951, էջ 359:
 29 Անանուն Լիվոնացու ժամանակագրությունը, «Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ.», հատ. I, էջ 276:

շարժի ատուրքս բարձաք գկիրակէի վաճառն ի փողոցէ...»³⁰, այսինքն՝ երկրաշարժի վտանգի պատճառով արգելել է փողոցներում կիրականօրյա վաճառքը³¹: Թե ստույգ որ երկրաշարժի մասին է վկայում վիճակը, դժվար է ասել, քանի որ նախորդ հրատարակիչները ևս շրջանցել են այդ հարցը: Անշուշտ, այս բացառիկ հիշատակությունը ևս կարելի է կապել երկնային երևույթների, մասնավորապես՝ Արեգակի հնարավոր խավարման հետ, որին, ինչպես տեսանք, սովորաբար հաջորդել է երկրաշարժը, ինչը զգուշանալու հիմք է դարձել:

Նշենք, որ Մխիթար եպս. Տեղերեցու գործունեության ժամանակաշրջանն ընդունված է համարել 13-րդ դ. 70-ական թթ.³²: Այդ են փաստում նաև նույն գավթի որմնախորշերում պահպանված գրչությանը և բովանդակությամբ ժամանակամերձ մյուս վիճագրերը, որոնցից թվակիր վաղագույն հիշատակությունը 1269 թվականից է: Անիի քահանայից դասը (իրիցանիս) բաժից (վաճառահարկ, հողահարկ) ապահարկելու մասին վկայող այդ վիճագրի թվականը նախորդ հետազոտողներից շատերը 2ժԸ-ի (1269) փոխարեն սխալմամբ 2ժԲ (1263) են կարդացել³³: Թերևս հենց այս թվագիրն է հիմք հանդիսացել պատմաբան Լավրենտի Բարսեղյանի՝ Անիում 1263 թ. տեղի ունեցած երկրաշարժի հիշատակության համար, քանի որ նա իբրև աղբյուր է վկայակոչում հայ վիճագրության Անիի պրակը³⁴: Ի հավելումն ասենք, որ **Ուշիի Ս. Սարգիս վանքի** գավթի բարավորի 1264 թ. վիճագրի հաղորդմամբ՝ մեծ գավիթը կառուցվել է խախտված եկեղեցու տեղում, «...գոր շարժեալ ի հիմանց...»³⁵, այսինքն՝ այստեղ ավելի վաղ մեկ այլ եկեղեցի է եղել, որը վնասվել է երկրաշարժից: Սա լավ կովան է՝ 1260-ականների սկզբներին Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժը վավերացնելու առումով, որի հետևանքներն արտացոլվել են վերոնշյալ վիճագրերում:

Արենիի Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան մուտքի կամարակապ բարավորի ուղղանկյունաձև շրջանակով երիզված վիճագրում հիշատակվում են եկեղեցու կառուցումը նախաձեռնողի՝ Սյունյաց առաջնորդ Հովհաննես արք. Օրբելի, նրա մերձավորների՝ իշխանաց իշխան, «քաջ մենամարտիկ» Բուրթելի, կողակից Վախախի և գավակների՝ «նորաբողբոջ» Բեշքենի և Իվանեի անունները, վերջում՝ նաև Մոմիկ վարդպետի (ձար-

30 ԴՀՎ, պրակ I. Անի քաղաք, կազմեց՝ Օրբելի Հ., Եր., 1966, էջ 24, արձ. 76:

31 Տե՛ս **Մաքևոսյան Կ.**, Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Ս. էջմիածին, 1997, էջ 80: Տե՛ս նաև նույնի Անի քաղաքի փողոցները, «էջմիածին», 2021, Գ, էջ 69:

32 Տե՛ս նույն տեղում, էջ 108:

33 Տե՛ս Հ. **Ներսես վրդ. Սարգիսեան**, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 133, Հ. **Պետրոս Ալիշան**, Շիրակ. տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ, 1881, էջ 62, «Համառօտ տեղագրութիւն հնութեանց մեծին Շիրակայ եւ մայրաքաղաքին Անոյ», աշխատասիրութիւն **Մելքիսեղեկ քհ. Չէրզեանց**, Աղէքսանդրապօլ, 1903, էջ 45:

34 Տե՛ս **Բարսեղյան Լ.**, նշվ. աշխ., էջ 30, 50-51:

35 **Բաբայան Ֆ., Քայանթարյան Ա.**, Ուշիի Ս. Սարգիս վանքի վիճակն արձանագրությունները, «Պատմաբանասիրական հանդես», 2001, N 2, էջ 186:

տարապետի) անունը, կառուցման ժամանակն ու տեղի ունեցած երկրաշարժը. «Թվին 2Ը. (1321 թ.), **շարժ եղև, Մոմիկ վարդպետ**»³⁶:

13-14-րդ դդ. գործած շնորհաշատ արվեստագետ Մոմիկի ձեռակերտը համարվող այս կառույցն աչքի է ընկնում քանդակային բարձրարվեստ լուծումներով: Այսպես՝ արևմտյան մուտքի կամարակապ բարավորի կենտրոնում՝ բուսական, ծաղկահյուս հարդարատարրերի հենքին, գորգին նստած Տիրամայրն է՝ մանուկ Հիսուսը գիրկը (Օղիգիդրիա)³⁷, իսկ գմբեթատակ քառակուսու անկյուններում՝ առագաստների վրա, չորս ավետարանիչների լուսապսակակիր խորհրդանշաններն են (Մարդակերպ հրեշտակ, Առյուծ, Եգ/Ցուլ, Արծիվ)՝ իրենց ավետարաններով: Ինքնատիպ են նաև արևելյան զույգ խաչաձև և դրանց վերևում մեկ կլոր լուսամուտները, որոնց միակ նախատիպը կարող է համարվել 1295 թ. ի հիմանց վերակառուցված Տաթևի վանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որի ճարտարապետը ևս համարվում է Մոմիկը³⁸:

Ինչ վերաբերում է վկայված երկրաշարժին, ապա, վիմագրից բացի, 1321 թվակիր մի համառոտ հիշատակություն է պահպանվել ՄՄ 3854 ձեռագրում, որը, ի թիվս այլ մանր ժամանակագրական միավորների, հրատարակել է Վ. Հակոբյանը: «Վասն անցեալ ատուրցն» խորագրով հատվածը սկսվում է 846 թ. Գանձակի կառուցման մասին հիշատակությամբ և հասնում մինչև 1388 թ., իսկ 1321-ի դիմաց նշված է «շարժն երեկ»³⁹: Դժվար է ասել՝ արդյո՞ք վկայվածը Վայոց ձորի երկրաշարժն է: Ճարտարապետ Ստ. Մնացականյանը նկատում է, որ այդ երկրաշարժի մասին գրավոր որևէ աղբյուր մեզ չի հասել, բայց վիմագիր հիշատակությունը վկայում է, որ այն բավական ուժգին է եղել⁴⁰: Ճարտարապետն այդ նույն երկրաշարժի հետևանք է համարում Նորավանքի գավթի և Մայիտակավոր Ս. Աստվածածին եկեղեցու գմբեթի վերակառուցումները⁴¹, որին հետևելով՝ Կարեն Մաթևոսյանը հավելում է, որ Արենիի եկեղեցու վիմագրում երկրաշարժի հիշատակումը «Մոմիկի համար գուցե անհրաժեշտ էր որպես «հուշում» այդ շրջանում եկեղեցիներում իրականացվող կամ իրականացվելիք վերականգնումների մասին»⁴²:

Կարծում ենք՝ հիշյալ երկրաշարժի հետ են աղերսվում նաև ԸԸ Գեղարքունիքի մարզի **Վարդենիկ գյուղի արևմտյան գերեզմանոցում**

36 ԴՀՎ, պրակ III, էջ 29, արձ. 61:

37 Պատկերաքանդակին հանգամանորեն անդրադարձել է արվեստաբան Քնարիկ Ավետիսյանը (տես **Ավետիսյան Ք.**, Աստվածամոր քանդակները Արենիում և Նորավանքում, «Նորավանք» տարեգիրք, Եր., 2001, էջ 110-120):

38 Տես **Մնացականյան Ստ.**, Վարդենիկ վարդենիկ. Մանուել, Տրդատ, Մոմիկ, Եր., 1982, էջ 153-154: Հմմտ. **Մաթևոսյան Կ.**, Մոմիկ, Եր., 2012, էջ 28-32:

39 Ժամանակագրական մանր հատվածներ, տես «Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ.», հատ. I, էջ 392: Հմմտ. **Բարսեղյան Լ.**, նշվ. աշխ., էջ 31, 56:

40 Տես **Մնացականյան Ստ.**, նշվ. աշխ., էջ 158:

41 Տես նույն տեղում:

42 **Մաթևոսյան Կ.**, Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները, Եր., 2017, էջ 53, ծնթ. 1:

պահպանված զույգ տապանագրերը: Դրանցից մեկը թվակիր է՝ 1322 թ., ըստ որի՝ ննջեցյալը ոմն Մոխիոնի եղբայր Մամիկոն սարկավագն է, որը երկրաշարժի զոհ է դարձել. «**շարժս** գմեզ տարաւ. վայ մարն»⁴³: Կից տապանաքարին կարդում ենք Խուտեր քահանայի որդիների՝ Մոխիոնի և Սայինի անունները, որոնք կյանքից հեռացել են, քանզի «ընդ մեղաց բարկացաւ Աստուած ու մեք՝ ԺԱ. (11) հոգի **ի շարժէ** անցաք»⁴⁴: Իրավացի է Ս. Բարխուդարյանը, երբ նշում է, որ չնայած այս տապանաքարը թվակիր չէ, բայց, անկասկած, նախորդի ժամանակակիցն է: Տապանագրերը կարծես «վավերացնում են» Մոմիկի հիշատակած երկրաշարժն ու ընդգծում աղետի կործանարար լինելը: Հատկապես վերջին հիշատակությունն ուշագրավ է այնքանով, որ հստակեցնում է երկրաշարժի հետևանքով զոհվածների թվաքանակը՝ 11 հոգի:

Երկրաշարժերի մասին անուղղակիորեն վկայող վիմագիր հիշատակություններ են պահպանվել Գեղարքունիքի Լիճք և Ակունք գյուղերում: Ժամանակագրորեն վաղագույնը **Լիճքի Ս. Աստվածածին եկեղեցու** արևելյան պատի հյուսիսային կողմում՝ ներքուստ ազուցված խաչքարի 1456 թվակիր վիմագիրն է, ըստ որի՝ ոմն Ճանտար խաչքար է կանգնեցրել իր հոգու փրկության համար, քանզի «...ԺԸ. (18) տարի **գեղս ակեր էր** շինեցի, տանուտրութին արի»⁴⁵: Ավերված գյուղը վերաշինելու մասին վկայության հիման վրա Լ. Բարսեղյանը երկրաշարժ է հիշատակում նաև խաչքարը կանգնեցնելու թվականին՝ 1456 թ.⁴⁶, մինչդեռ եթե երևույթը պայմանավորենք ենթադրյալ երկրաշարժով, ապա աղետի տարեթիվ պիտի համարել առնվազն 1438-ը, որի հետևանքով տասնութ տարի ավեր մնացած գյուղը ճանտարը շենացրել ու տանուտրություն է արել:

Մյուս հիշատակությունը պահպանվել է **Ակունք գյուղից** մոտ 4 կմ հարավ ընկած «**Գոմեր**» **գյուղատեղի** խոնարհված եկեղեցու հյուսիսային կողմում կանգուն գեղաքանդակ խաչքարի վիմագրում: 1552 թվակիր արձանագրության համաձայն՝ Սարգիս երեցը (որը թերևս նաև խաչքարագործ վարպետն է) և իր կողակից Մելիքխաթունը խաչքար են կանգնեցրել իրենց հոգիների փրկության համար, քանզի «...Դ (4) որդի իմ փոխեցան ի Քրիստոս. Աւետարանի հրամանք է՝ ամեն ցաւէ փախացկի պիտի, մահովն տեսանք՝ փախացն ապրէց, նստածն մեռաւ, բաւ է իմաստնից»⁴⁷: Իր տեսա-

43 ԴՀԿ, պրակ IV. Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, կազմեց **Բարխուդարյան Ս.**, Եր., 1973, էջ 155, արձ. 632:

44 Նույն տեղում, էջ 155, արձ. 633:

45 Նույն տեղում, էջ 144, արձ. 589: Խաչքարը զոտևորող արձանագրության վերին քիվի հատվածում տառերն աջից ձախ շրջագիր են, ինչի առնչությամբ այս վիմագրին վերջերս առիթ ենք ունեցել անդրադառնալու և վերծանված «իշխանութիւն» բառի փոխարեն վերընթերցել ենք «տանուտրութիւն» (տես **Հարությունյան Ա.**, Տաթևի վանքի նորահայտ ծածկագիրը և նմանօրինակ մյուս վիմագրերը, «Կէմ» համահայկական հանդես, 2021, N 3, էջ 157):

46 Տես **Բարսեղյան Լ.**, նշվ. աշխ., էջ 32:

47 ԴՀԿ, պրակ IV, էջ 358, արձ. 1441:

կով ինքնատիպ այս վիճակի բովանդակությունը ևս թույլ է տվել Լ. Բարսեղյանին այն ընդգրկել երկրաշարժերի համահավաք ցուցակում⁴⁸: Չնայած նրան, որ վիճակը մեզ հետաքրքրող աղետի մասին ուղղակի տեղեկություն չի հաղորդում, այնուհանդերձ տրամաբանական ենք համարում վկայված չորս որդիների մահը, նաև փախածի փրկվելն ու նստածի մեռնելն իրապես երկրաշարժի հետևանք համարելը, ինչի առթիվ խաչքար է կանգնեցվել:

Նմանօրինակ մի վկայություն էլ **Սանահինի վանքի Ս. Ամենափրկիչ եկեղեցու ժամատան** վիճակներից մեկում է պահպանվել: Ըստ արձանագրության՝ վանքի առաջնորդ, ծագումով Արդուրյան տոհմից Սարգիս արքեպիսկոպոսը միաբանների հետ միասին 1652 թ. նախաձեռնել է վանքի բարենորոգչական աշխատանքները, որոնց արդյունքում «...նորոգեցի Ամենափրկիչն եւ Աստուածածինն, զանկակատունն, Սբ Գրիգորն, նշխարայխուցն. ամէն»⁴⁹: Վիճակի ծանոթագրության մեջ նշվում է, որ Սարգիս արքեպիսկոպոսը վանքում նորոգչական աշխատանքներ է նախաձեռնել երկրաշարժից հետո⁵⁰, սակայն ո՞ր երկրաշարժն են նկատի ունեցել ուսումնասիրողները՝ դժվար է ասել (թերևս այդ տեսակետը մեծամասշտաբ նորոգումներով է պայմանավորված): Սանահինի վանքին նվիրված մենագրության մեջ Կարո Ղաֆաղարյանը երկրաշարժի մասին որևէ տեղեկություն չի հաղորդում, փոխարենը խնդրո առարկա արձանագրությունը համարում է վանքի ընդհանուր նորոգման մասին վկայող վավերագիր և տարբեր առիթներով հիշատակում վանքի առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոսին և նրա օրոք նորոգման գործը ստանձնած ուստա Սարգսին ու վերջինիս աշակերտներին՝ Հերայետին, Դավթին, Հեսուին և Կարապետին, որոնց անունները հիշատակված են մեկ այլ՝ կցագրերով աչքի ընկնող վիճակում⁵¹:

Ի տարբերություն նախորդ հիշատակությունների՝ մատենագրության մեջ բազմիցս վկայված է 1679 թ. **Երևանի մեծ երկրաշարժը**, որը հիմնահատակ ավերեց ողջ Արարատյան դաշտը՝ սկսելով Գամնիից՝ հասնելով Գեղարդ, Հավուց թառ, Քանաքեռ, Նորագավիթ, Խոր Վիրապ, մինչև անգամ Սևանի ավազան: Այս երկրաշարժը մանրամասն նկարագրել է պատմագիր Զաքարիա Քանաքեռցին⁵²: Այն հիշատակված է նաև ճանապարհորդ, վաճառական Զաքարիա Ազուլեցու օրագրության մեջ⁵³, գրիչ Գրիգոր

48 Տե՛ս **Բարսեղյան Լ.**, նշվ. աշխ., էջ 33:
 49 ԴՀՎ, պրակ IX, էջ 38, արձ. 25:
 50 Տե՛ս նույն տեղում:
 51 Տե՛ս **Ղաֆաղարյան Կ.**, Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Եր., 1957, էջ 140, արձ. 65: Հմնտ. ԴՀՎ, պրակ IX, էջ 66, արձ. 79:
 52 Տե՛ս **Զաքարիա Քանաքեռցի**, Պատմութիւն: Կոնդակ Սուրբ ուխտին Յօհաննու վանից, աշխատասիրությամբ՝ **Ա. Վիրաբյանի**, Եր., 2015, էջ 149:
 53 Տե՛ս **Զաքարիա Ազուլեցու** Որագրությունը, Յերեսան, 1938, էջ 143:

Երևանցու հիշատակարաններում⁵⁴, ինչպես նաև հետագա ուսումնասիրողների աշխատություններում⁵⁵: Աղետի հետևանքով խոնարհված բազմաթիվ եկեղեցիների տեղում 17-18-րդ դդ. կառուցվեցին նորերը՝ հիմք դնելով հիշյալ պատմաշրջանի ճարտարապետական դպրոցի ձևավորմանը⁵⁶:

Հայտնի է, որ Երևանի Կոնդ-Կոզեռնի երբեմնի գերեզմանոցը քաղաքի կենտրոնում բավական ընդարձակ տարածք է զբաղեցրել, ուստի 1930-ական թթ. Երևանի հատակագծման և քաղաքի ընդարձակման աշխատանքների ընթացքում որոշվել է այն «տեղափոխել»՝ թողնելով միայն Մովսես Տաթևացի կաթողիկոսի (1629-1633 թթ.) մատուռ-դամբարանը, որտեղ հանգչում էին նաև նշանավոր տոմարագետ Հովհաննես Կոզեռնը, րաբունապետ Մելքիսեթ Վժանեցին, Սահակ Մելիք-Աղամալյանն ու իր ընտանիքի անդամները: Նշենք, որ դամբարանն այսօր վերածվել է բնակելի տան, իսկ սուրբ հայրերի տապանաքարերը պարզապես կորած են համարվում⁵⁷: Գերեզմանոցի տապանագրերից շուրջ հարյուրը ժամանակին հրատարակել է Կ. Ղաֆադարյանը, որոնցից մեկում հիշատակվում է նույն 1679 թ. երկրաշարժը. «Այս է տապան Ովանէսի որդի Մկրտիչին, որ վաղձանեցաւ **մեծ շարժով**, յունիսի Դ. (4), թվին ՌՃԻԸ. (1679)»⁵⁸:

Հիշյալ երկրաշարժի հետևանքով են գոհվել նաև **Առինջի պատմական մեծ գերեզմանոցում** թաղված տեր Գալուստիկը, Հռոռնն ու որդի Գևորգը («...որ նահատակեցան **ահագին շարժմանն**, թվին ՌՃԻԸ. (1679)»⁵⁹), տեր Մանուել քահանան և իր կողակիցը («...որ կարճայիասակնս հատեցաւ **ի շարժելն երկրիս**»), իսկ տեր Ազարիայի՝ նույն գերեզմանոցում գտնվող 1679 թվակիր տապանագիրը հուշում է, որ նա նույնպես երկրաշարժի գոհերից է. «Այս է տապան տէր Ազարիային, թվին ՌՃԻԸ. (1679)»⁶⁰: Հիրավի, նշված տապանագրերը գալիս են վերահաստատելու մատենագրության մեջ վկայված 1679 թ. արհավիրքը:

Հետաքրքիրն այն է, որ հիշյալ երկրաշարժից անսասան են մնացել մեր նվիրական երեք նշանավոր վանքերը՝ Ս. Էջմիածնի Մայր տաճարը, Ս. Հռիփսիմեն և Ս. Գայանեն: Ըստ Գրիգոր Երևանցու հիշատակարանի՝ երկրաշարժի հետևանքով մեծ Մասիսից մինչև Շամիրամի բլուրը հիմնահա-

54 Տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հատ. Բ., կազմեցին **Եգանեան Օ., Զէյթունեան Ա., Անթարեան Փ.**, Եր., 2004, սյուն 659-660: Հմմտ. նույնի հատ. Ե., սյուն 155-156:

55 Տե՛ս **Ստեփանյան Վ.**, նշվ. աշխ., էջ 80-87, **Քարսեղյան Լ.**, նշվ. աշխ., էջ 51-53 նմ:

56 Այս մասին տե՛ս **Հասրաբեան Ա.**, Հայաստանում ուշ միջնադարում շինարարական գործի կազմակերպումը, «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրուք, 1997, հատ. ԺԷ, էջ 205-217:

57 Կոզեռնի մատուռ-դամբարանին վերջերս ենք անդրադարձել (տե՛ս **Հարությունյան Ա.**, Երևանի Ս. Անանիա առաքյալի անապատը կամ Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցին, Եր., 2020, էջ 51-53):

58 **Ղաֆադարյան Կ.**, Երևան. միջնադարյան հուշարձանները և վիճակն արձանագրությունները, Եր., 1975, էջ 185, արձ. 165:

59 **Գասպարեան Ռ.**, Միջնադարեան Առինջ գիւղը եւ նրա վիճակն յուշարձանները, «Հանդէս ամսօրեայ», Կիւննա-Երեւան, 2005, N 1-12, սյուն 331, արձ. 39: Ռ. Գասպարյանը որդու անունը *Գրիգոր* է կարդացել:

60 Այս և նախորդ վիճագրերը հրատարակության են պատրաստվում «Դիվան հայ վիճագրության» ՀՀ Կոտայքի մարզն ընդգրկող պրակում: Նյութը սիրահոժար տրամադրելու համար մեր երախտագիտությունն ենք հայտնում պրակը կազմող վիճագրագետ Գագիկ Սարգսյանին:

տակ քարուքանդ է եղել, «բայց ի գլուխ կաթուղիկեաց հանուրց եկեղեցեաց՝ լուսաորչաշէն բարձրագունբէթն էջմիածին միայն մնաց՝ հանդերձ Գայանաւ եւ Հռիփսիմէին, ի պարծանս ազգիս մերոյ»⁶¹: Չնայած դրան՝ **Ս. Էջմիածնի Մայր տաճարի գմբեթի խաչաթողը** գոտևորող ելնդատատ արձանագրությունը վկայում է, որ Եղիազար Այնթապցի կաթողիկոսի (1681-1691 թթ.) օրոք՝ 1690 թ., նորոգվել է երկրաշարժից ու կայծակից խախտված (թերևս՝ վնասված) խաչը. «...**ի շարժման է եւ ի կայծակնայ խախտեալ կրկին նորոգեցաւ ՌՃԼԹ. (1690) թվին**»⁶²: Մեր ուսումնասիրությունը պարզեց, որ թեպետ Արարատյան դաշտում երկրաշարժեր են հիշվում նաև 1681 և 1683 թթ.⁶³, այդուհանդերձ, Մայր տաճարի խաչի ու խաչաթողի՝ 1690 թ. նորոգված լինելու փաստը պիտի պայմանավորել 1679 թ. ուժգին երկրաշարժով, որի հետևանքով Մայր տաճարի գմբեթը, այնուամենայնիվ, վնասվել է⁶⁴:

Երկրաշարժից խոնարհված եկեղեցին վերակառուցելու մասին է վկայում նաև ներկայիս **Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցու** արևմտյան մուտքի բարավորի արձանագրությունը, ըստ որի՝ եկեղեցին «...յառաջ **ի շարժման է փլուցաւ**, որ քար ի քարի վերայ որ ոչ մնաց...»⁶⁵, իսկ վերակառուցումն իրականացվել է յուզբաշի (հարյուրապետ) Փիլում Թայիրյանցի և համայնքի միջոցներով: Թեմակալ առաջնորդ և տեղագիր Սարգիս արք. Ջալալյանցի վկայությամբ՝ 1828 թ. Ղարաքիլիսայում ուժգին երկրաշարժ է գրանցվել, որի հետևանքով եկեղեցին և հարակից շինությունները «ի միասին անկեալ հիմնովին կործանեցան»⁶⁶, որից հետո՝ 1830 թ., պարոն Փիլում Թայիրյանցի և հայ բնակչության միջոցներով եկեղեցին վերակառուցվել է⁶⁷: Փաստորեն, Ջալալյանցի հաղորդած տեղեկությունը հաստատվում է նաև խնդրո առարկա վիճագրով, որը կարելի է թվագրել հենց 1830-ական թթ. սկզբներով: Վկայված է, ըստ ամենայնի, Թիֆլիսի 1828 թ. մայիսի 20-ի կամ Փամբակ-Շորագյալի հունիսի 23-ի երկրաշարժերից մեկը⁶⁸:

Երկրաշարժի մասին համառոտ մի հիշատակություն է պահպանվել նաև ՀՀ Կոտայքի մարզի **Շահապ (ներկայիս՝ Մայակովսկի) գյուղի Ս. Գևորգ** (հիշվում է նաև **Ս. Աստվածածին** անունով) **եկեղեցու** արև-

61 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հատ. Ե., սյուն 156:

62 Տես **Ավետիսյան Ա.**, Նորահայտ վիճական արձանագրություններ և վիճագրական ճշգրտումներ Էջմիածնի Մայր տաճարում, «Հայագիտության հարցեր», 2020, N 1, էջ 118: Տես նաև **Հարությունյան Ա.**, Ս. Էջմիածնի Մայր տաճարի գմբեթի խաչաթողի արձանագրությունը, «Էջմիածին», 2020, Ժ, էջ 117:

63 Տես **Ստեփանյան Վ.**, նշվ. աշխ., էջ 80, 87:

64 Տես **Հարությունյան Ա.**, Ս. Էջմիածնի Մայր տաճարի գմբեթի խաչաթողի արձանագրությունը, էջ 119: Ինչ վերաբերում է խաչի կայծակի պատճառած վնասներին, պալ նախորդ հետազոտության ընթացքում մեզ հաջողվեց համանման գույգ հիշատակություններ գտնել նաև ժամանակագրություններում, ըստ որոնց կայծակի հետևանքով վնասվել են եկեղեցիների գմբեթները (տես նույն տեղում, էջ 119-120):

65 ԴՀՎ, պրակ IX, էջ 426, արձ. 971:

66 **Սարգիս արք. Ջալալեանց**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ., Տիֆլիս, 1858, էջ 105:

67 Տես նույն տեղում:

68 Տես **Ստեփանյան Վ.**, նշվ. աշխ., էջ 100:

մտյան պատին ագուցված խաչաքանդակի 1829 թ. վիմագրում: Դրանում հիշատակված է տեր Ղազարի անունը, որը, ըստ ամենայնի, նաև կոթողի քանդակագործն ու փորագրիչն է. «Սբ խաչս յիշատակ է տէր Ղազարին, ձեռամբ իւր կազմեաց, թվին 1829»⁶⁹: Վիմագրի վերջում հետագայում մանր տառերով լրացում է արվել. «1840-ին, յունիսի 20-ին, **յԱկուռու շարժն**»⁷⁰: Անշուշտ, վկայված է Ակոռիի հայտնի երկրաշարժը, որի հետևանքով հիմնահատակ ավերվեցին ողջ գյուղն ու տեղի սրբավայրերը: Հովհաննես եպս. Շահխաթունյանցը գրում է, որ սաստիկ երկրաշարժը «...ծածկեալ զմենաստան Սրբոյն Յակոբայ եւ զեկեղեցին բնակչօք հանդերձ՝ էջ, կալա եւ ծածկեաց զբովանդակ գիւղն Ակոռի... յորում գտանէին աւելի քան զհազար բնակիչս»⁷¹: Շահապի եկեղեցու պատին այսօրինակ հիշատակությունը թույլ է տալիս ենթադրել, որ Ակոռիում զոհվել են նաև Շահապ գյուղից գնացած հայեր:

Անշուշտ, երկրաշարժերի մասին վիմագիր հիշատակություններն այսքանով չեն սպառվում: Հրնթացս կատարվող ուսումնասիրություններն ու հնագիտական պեղումները բացահայտելու են հայ վիմագրության այլ ուշագրավ էջեր, որոնք դեռ պիտի համալրեն մեր աղբյուրագիտական շտեմարանը: Այդուհանդերձ, նշվածներն էլ բավարար են ընդհանուր պատկերացում կազմելու վիմագիր սկզբնաղբյուրներում հիշատակված երկրաշարժերի ժամանակագրության, տեղագրության և առհասարակ դրանց հետևանքների մասին: Փաստելի է այն, որ երկրաշարժերի մասին հիշատակությունները տեղ են գտել ինչպես շինարարական ու նվիրատվական, այնպես էլ խաչքարային ու տապանաքարային արձանագրություններում: Վկայված օրինակներն ամբողջացնող աղյուսակը ներկայացնում ենք ստորև:

Ը/հ	Տեղը	Ժամանակը	Աղբյուրը
1.	ՀՀ Վայոց ձորի մարզ, Քարկոփի կամ Խոտակերաց վանք	10-րդ դարասկիզբ	ԴՀՎ/3, ներդիր/666
2.	ՀՀ Լոռու մարզ, Հաղբատի վանք	ՆԿԵ.-1016 թ.	ԴՀՎ/9, 131/236
3.	ՀՀ Արագածոտնի մարզ, Կոշի որմնափակ խաչքար	ՈԻԴ.-1175 թ.	Շահինյան 1968, 198. Մուրադյան 1977,

69 **Մեսրոպ արք. Սմբատեանց**, Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 277, **Կարապետյան Ա.**, Նորագյուղ և Մայակովսկի գյուղերի պատմական հուշարձանները, Եր., 2014, էջ 10:

70 **Կարապետյան Ա.**, նշվ. աշխ., էջ 10: Ամաթիվն ընթերցվել է «յունիսի 2», մինչդեռ ուղղում ենք «յունիսի 20» նկատառելով ոչ միայն երկրաշարժի մասին առկա մատենագրական տեղեկությունները, այլև վիմագրի կողմից վերնամասում «0»-ի հավելումը: Վիմագրի առաջին հրատարակիչ Մեսրոպ արք. Սմբատյանցը երկրաշարժի մասին վկայող հատվածը չի հիշատակում:

71 **Յովհաննես եպս. Շահխաթունեանց**, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ **Ա. Տեր-Ստեփանյանի**, Ա. Էջմիածին, 2014, էջ 220-221: Երկրաշարժի մասին մանրամասն տես **Ստեփանյան Վ.**, նշվ. աշխ., էջ 106-122:

			106. Պետրոսյան 2008, 366
4.	Անի, Առաքելոց եկեղեցու գավիթ	13-րդ դ. երկրորդ կես	ԴՀՎ/1, 24/76
5.	Ուշիի Ս. Սարգիս վանքի գավիթ	2ԺԳ.-1264 թ.	Բարայան, Քալանթարյան 2001, 186
6.	ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենիի Ս. Աստվածածին եկեղեցի	2Հ.-1321 թ.	ԴՀՎ/3, 29/61
7.	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Վարդենիկ, արևմտյան գերեզմանոց	2ՀԱ.-1322 թ.	ԴՀՎ/4, 155/632
8.	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Վարդենիկ, արևմտյան գերեզմանոց	14-րդ դարի առաջին քառորդ	ԴՀՎ/4, 155/633
9.	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Լիճք, Ս. Աստվածածին եկեղեցի	ՋԵ.-1456 թ. (1456-18=1438 թ.)	ԴՀՎ/4, 144/589
10.	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ակունք, «Գոմեր» գյուղատեղ	ՌԱ.-1552 թ.	ԴՀՎ/4, 358/1441
11.	ՀՀ Լոռու մարզ, Սանահինի վանք	ՌՃԱ.-1652 թ.	ԴՀՎ/9, 38/25
12.	Երևան, Կոզեռնի գերեզմանոց	ՌՃԻԸ.-1679 թ.	Ղաֆադարյան 1975, 185/165
13.	ՀՀ Կոտայքի մարզ, գ. Առինջ, մեծ գերեզմանոց	ՌՃԻԸ.-1679 թ.	Գասպարյան 2005, 331
14.	ՀՀ Կոտայքի մարզ, գ. Առինջ, մեծ գերեզմանոց	ՌՃԻԸ.-1679 թ.	Սարգսյան- ԴՀՎ/անտիպ
15.	ՀՀ Կոտայքի մարզ, գ. Առինջ, մեծ գերեզմանոց	ՌՃԻԸ.-1679 թ.	Սարգսյան- ԴՀՎ/անտիպ
16.	ՀՀ Արմավիրի մարզ, Ս. Էջմիածնի Մայր տաճար, գմբեթի նախկին խաչաթոռ	ՌՃԼԹ.-1690 թ.	Ավետիսյան 2020, 118. Հարությունյան 2020, 117
17.	ՀՀ Լոռու մարզ, Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցի	1828 թ.	ԴՀՎ/9, 426/971
18.	ՀՀ Կոտայքի մարզ, գ. Մայակովսկի, Ս. Աստվածածին/Գևորգ եկեղեցի	1840 թ. (Ակոռի)	Կարապետյան 2017, 10

Արսեն Է. Հարությունյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայկական վիճագրությունն ու ձեռագրագիտությունը: Հեղինակ է 9 գրքի և 8 տասնյակից ավելի գիտական հոդվածների:

Էլ. հասցե՝ ars.vimagraget@gmail.com

Summary

THE NATURAL DISASTERS AND CELESTIAL PHENOMENA IN EPIGRAPHS

Part I: Earthquake

Arsen E. Harutyunyan

Candidate of Sciences in History

Key words – geological phenomena, earthquake, solar eclipse, epigraph, “Corpus of Armenian Epigraphy”, Sedrak Barkhudaryan, epitaph, khachkar (cross-stone).

The epigraphic inscriptions of medieval Armenia are of various content. The building, donative inscriptions approving the legal norms and epigraphic texts created on other events provide reliable evidence on the celestial and geological phenomena, in particular about earthquakes, solar eclipse, draught, sea storm and other similar cases. With the given study we have made an attempt for the first time to explain the mentions about natural disasters and celestial phenomena, evidenced in Armenian epigraphs, in the first turn – the earthquakes. The memorial inscriptions of the 10th-19th centuries in the monasteries of Karkop, Haghpat, Sanahin, the khachkar of Kosh (cross-stone) embedded into the wall, inscriptions from the villages of Areni, Vardenik, Lichk, Arinj, Mayakovski and other settlements and monuments shed light on the chronology of earthquakes, the topographical features and the cause-sequential manifestations of natural disasters that took place in the Armenian Highland.

Significantly, similar cases were also documented and were traditionally evidenced within the epigraphic context compiled in different occasions of memorial inscriptions (building ones, erection of a monument, epitaph, etc.). The epigraphic inscriptions enable us to definitely state that the celestial phenomena, in particular solar eclipse was often preceded by earthquakes, which was not once evidenced also in the works of chroniclers.

СТИХИЙНЫЕ БЕДСТВИЯ И НЕБЕСНЫЕ ЯВЛЕНИЯ В ЭПИГРАФИЧЕСКИХ НАДПИСЯХ

Часть 1. Землетрясения

Арсен Э. Арутюнян

Канд. ист. наук

Ключевые слова – геологические явления, землетрясение, солнечное затмение, эпиграфическая надпись, «Свод армянских надписей», Седрак Бархударян, эпирафия, хачкар (крест-камень).

Эпиграфические надписи средневековой Армении разнообразны по своему содержанию. Строительные, дарительные надписи, утверждающие нормы права и составленные в связи с другими событиями эпиграфические тексты, сообщают достоверные сведения о небесных и геологических явлениях, в частности о землетрясениях, солнечных затмениях, засухах, морских штормах и других подобных происшествиях. Настоящим исследованием нами предпринята попытка впервые представить упоминания о стихийных бедствиях и небесных явлениях в армянских лапидарных надписях, в первую очередь – о землетрясениях. Памятные надписи X-XIX вв. в Каркопском, Ахпатском, Санаинском монастырях, на встроенном в стену в Коше хачкаре (крест-камне), надписи из сел Арени, Варденик, Личк, Аридж, Маяковский и прочих населенных пунктов и на других монументальных памятниках проясняют хронику землетрясений, топографические особенности и причинно-следственные проявления стихийных бедствий, происходивших на Армянском нагорье.

Примечательно, что подобные события традиционно фиксировались в контексте составленных по разным случаям памятных надписей (строительные, повествующие о возведении памятника, эпитафии и пр.). Эпиграфические надписи позволяют с уверенностью констатировать, что землетрясениям часто предшествовали небесные явления, в частности солнечные затмения, что не раз было засвидетельствовано в сочинениях летописцев.

REFERENCES

- “Hamaṛōt teghagrut’iwn hnut’eants’ metsin Shirakay yew mayrak’aghak’in Anwoy”, ashkhatasirut’iwn **Melk’isedek k’h. Gēorgeants’**, Aghēk’sandrapōl, 1903 (**In Armenian**).
1. “Manr zhamanakagrut’yunner. XIII-XVIII dd.”, hat. I, kazmets’` **Hakobyan V.**, Yer., 1951 (**In Armenian**).
 2. “Manr zhamanakagrut’yunner. XIII-XVIII dd.”, hat. II, kazmets’` **Hakobyan V.**, Yer., 1956 (**In Armenian**).
 3. “Mayr ts’uts’ak hayerēn dzeragrats’ Mashtots’i anuan Matenadarani”, hat. B., kazmets’in` **Yeganean Ō., Zēyt’uncan A., Ant’abean P’.**, Yer., 2004 (**In Armenian**).
 4. “Mayr ts’uts’ak hayerēn dzeragrats’ Mashtots’i anuan Matenadarani”, hat. Ye., kazmets’` **Yeganean Ō.**, Yer., 2009 (**In Armenian**).
 5. **Alishan Gh.**, Shirak. teghagrut’iwn patkerats’oyts’, Venetik, 1881 (**In Armenian**).
 6. **Arutjunjan N.**, Korpus urartsikx klinobraznyx nadpisej, Jer., 2001 (**In Russian**).
 7. **Asatryan A.**, Inch’ ē haytni Koshi 1176 t’. yerkrasharzhits’, “Aṛavot” ōrat’ert’, Yer., 2021, 12 hunvari (**In Armenian**).
 8. **Avetisyan A.**, Norahayt vimakan ardzanagrut’yunner yev vimagrakan chshgrtunner Ējmiatsni Mayr tacharum, “Hayagitut’yan harts’er”, 2020, N 1, ēj 113-128 (**In Armenian**).
 9. **Avetisyan K’.**, Astvatsamor k’andaknerē Arenium yev Noravank’um, “Noravank’” taregirk’, Yer., 2001, ēj 110-120 (**In Armenian**).
 10. **Babayyan F., K’alant’aryan A., Ushii S.** Sargis vank’i vimakan ardzanagrut’yunnerē, “Patmabanasirakan handes”, 2001, N 2, ēj 169-199 (**In Armenian**).
 11. **Badalyan H.**, Ōrats’uyts’i patmut’yun, Yer., 1970 (**In Armenian**).
 12. **Barkhudaryan S.**, Hushardzan-khach’k’ar, “Avangard”, Yer., 1958, 27 septemberi (**In Armenian**).
 13. **Barseghyan L.**, Patmagrakan vkayut’yunnerē Haykakan lērnashkharhi yerkrasharzheri masin (hnaguyn zhamanaknerits’ minch’ev XIX dari skizbē), Yer., 1995 (**In Armenian**).
 14. **Bozoyan A.**, Hay-byuzandakan yekeghets’akan banakts’ut’yunneri vaveragr (1165-1178 t’t’.), Yer., 1995 (**In Armenian**).
 15. DHV (Divan hay vimagrut’yan), prak I. Ani k’aghak’, kazmets’` **Ōrbeli H.**, Yer., 1966 (**In Armenian**).
 16. DHV (Divan hay vimagrut’yan), prak III. Vayots’ dzor. Yeghegnadzori yev Azizbekovi shrjanner, kazmets’` **Barkhudaryan S.**, Yer., 1967 (**In Armenian**).
 17. DHV (Divan hay vimagrut’yan), prak IV. Geghark’unik’. Kamoyi, Martunu yev Vardenisi shrjanner, kazmets’` **Barkhudaryan S.**, Yer., 1973 (**In Armenian**).
 18. DHV (Divan hay vimagrut’yan), prak IX. Loṛu marz, kazmets’in` **Barkhudaryan S., Ghafadaryan K., Saghumyan S.**, Yer., 2012 (**In Armenian**).
 19. **Gasporean Ṙ.**, Mijnadarean Aṛinj giwghē yew nra vimakan yushardzannerē, “Handēs amsōreay”, Vienna-Yerewan, 2005, N 1-12, siwn 313-338 (**In Armenian**).
 20. **Ghafadaryan K.**, Sanahni vank’ē yev nra ardzanagrut’yunnerē, Yer., 1957 (**In Armenian**).
 21. **Ghafadaryan K.**, Yerevan. mijnadaryan hushardzannerē yev vimakan ardzanagrut’yunnerē, Yer., 1975 (**In Armenian**).
 22. **Grigoryan A.**, Yerkrasharzhern ēst vimagrakan aghbyurneri, “Chgnazhamayin kaṛavarum ev texnologianer” gitakan ev gitamet’odakan hodvatsneri zhoghovatsu, N 12, Yer., 2017, ēj 259-265 (**In Armenian**).
 23. **Grigoryan Gr.**, Haykakan vimagrut’yun, Yer., 2000 (**In Armenian**).

24. **Hakobyan V.**, Davit' K'obayrets'u hishatakaranë, "Teghekagir" has. git., 1952, N 8, ëj 113-120 (**In Armenian**).
25. **Harut'yunyan A.**, S. Èjmiatsni Mayr tachari gmbet'i khach'atorì ardzanagrut'yunë, "Èjmiatsin", 2020, Zh, ëj 114-122 (**In Armenian**).
26. **Harut'yunyan A.**, Tat'evi vank'i norahayt tsatskagirë yev nmanòrinak myus vimagrërë, "Vëm" hamahaykakan handes, 2021, N 3, ëj 148-162 (**In Armenian**).
27. **Harut'yunyan A.**, Yerevani S. Anania arak'yali anapatë kam Zoravor S. Astvatsatsin yekeghets'in, Yer., 2020 (**In Armenian**).
28. **Harut'yunyan Kh.**, Hayeren dzeragreri hishatakaranerë, Yer., 2019 (**In Armenian**).
29. **Hasrat'ean M.**, Hayastanum ush mijnadarum shinararakan gortsi kazmakerpumë, "Haykazean hayagitakan handës", Pëyrut', 1997, hat. ZhÈ, ëj 205-217 (**In Armenian**).
30. **Jalaleants' Sargis ark'.**, Chanaparhordut'iwn I Metsn Hayastan, masn B., Tp'khis, 1858 (**In Armenian**).
31. **Karapetyan S.**, Noragyugh yev Mayakovski gyugheri patmakan hushardzannerë, Yer., 2014 (**In Armenian**).
32. **Kirakos Gandzakets'i**, Patmut'yun Hayots', ashkhata-sirut'yamb` **K. Melik'-Öhanjanyani**, Yer., 1961 (**In Armenian**).
33. **Kondorskaja N., Shebalin N.**, Novyj katalog sil'nyx zemletrjasenij na territorii SSSR s drevnejshix vremjon do 1975, M., 1977 (**In Russian**).
34. **Kostaneants' K.**, Sharzhi taregrut'iwnn hayots' mëj, T'iflis, 1902 (**In Armenian**).
35. **Manuch'aryan Al.**, K'nnut'yun Hayastani IV-XI dareri shinararakan vkayagreri, Yer., 1977 (**In Armenian**).
36. **Margaryan H.**, Hyusisayin Hayastani yev Vrastani ZhB dari patmut'yan mi k'ani harts'er, Yer., 1980 (**In Armenian**).
37. **Mat'evosyan K.**, Ani k'aghak'i p'oghots'nerë, "Èjmiatsin", 2021, G, ëj 68-82 (**In Armenian**).
38. **Mat'evosyan K.**, Ani. yekeghets'akan kyank'ë yev dzeragrakan zharangut'yunë, S. Èjmiatsin, 1997 (**In Armenian**).
39. **Mat'evosyan K.**, Momik, Yer., 2012 (**In Armenian**).
40. **Mat'evosyan K.**, Noravank'i vimagrërë yev hishatakaranerë, Yer., 2017 (**In Armenian**).
41. **Matt'ëos Urhayets'i**, Zhamanakagrut'iwn, B tpagrut'iwn, Vagharshapat, 1898 (**In Armenian**).
42. **Mnats'akanyan St.**, Varpetats' varpetner. Manuel, Trdat, Momik, Yer., 1982 (**In Armenian**).
43. **Muradyan P.**, Hayastani vrats'eren ardzanagrut'yunnerë. aghbyuragitakan k'nnut'yun, Yer., 1977 (**In Armenian**).
44. **Nersës Shnorhali**, Èndhanrakan t'ught'k', Yerusaghëm, 1871 (**In Armenian**).
45. **Petrosyan H.**, Khach'k'ar. tsagumë, gortsaruyt'ë, patkeragrut'yunë, imastabanut'yunë, Yer., 2008 (**In Armenian**).
46. **Samuël Anets'i yew sharunakoghner**, Zhamanakagrut'iwn. Adamits' minch'ew 1776 t'., ashkhata-sirut'yamb` **K. Mat'evosyani**, Yer., 2014 (**In Armenian**).
47. **Sargisean Nersës vrd.**, Teghagrut'iwnk' I P'ok'r yew I Mets Hays, Venetik, 1864 (**In Armenian**).
48. **Sargsyan G.**, Mijnadaryan kanonairavakan normeri vimagrakan artats'olumnerë, "Patmabanasirakan handes", 2006, N 2, ëj 109-133 (**In Armenian**).
49. **Sargsyan L.**, Hayastani nviratvakan ardzanagrut'yunnerë (9-14-rd dd.), Yer., 2007 (**In Armenian**).

50. **Shahinyan A.**, Koshi kot'oghë yev nra ardzanagrut'yunë, "Patmabanasirakan handes", 1968, N 2, ëj 197-202 (**In Armenian**).
51. **Shahkhat'uncants' Yovhannës yeps.**, Storagrut'iwn Kat'ughikë Ējmiatsni yew hing gawarats'n Araratay, ashkhatasirut'yamb` **A. Ter-Step'anyani**, S. Ējmiatsin, 2014 (**In Armenian**).
52. **Smbateants' Mesrovb ark'.**, Teghagir Geghark'uni tsovazard gawarï, vor ayzhm Nor-Bayazit gawar, Vagharshapat, 1895 (**In Armenian**).
53. **Step'anyan V.**, Yerkrasharzhërë Haykakan lemashkharhum yev nra merdzakayk'um, Yer., 1964 (**In Armenian**).
54. **Step'anos Örbëlean**, Patmut'iwn nahangin Sisakan, T'iflis, 1910 (**In Armenian**).
55. **Xachijan E.**, Prikladnaja sejsmologija, Jer., 2008 (**In Russian**).
56. **Zak'aria Agulets'u** òragrut'yunë, Yer., 1938 (**In Armenian**).
57. **Zak'aria K'anak'erts'i**, Patmut'iwn: Kondak Surb ukhtin Yöhannu vanits', ashkhatasirut'yamb` **A. Virabyani**, Yer., 2015 (**In Armenian**).